



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔ

ք. Ջերմուկ

13/հոկտեմբերի/2025 թ.

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 14
ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու¹⁰ անդամներ:

Բացակա էին՝

Գոհար Խաչատրյան, Մկրտչան Լևոնյան
Կարեն Ե. Չիբուքյան, Բաբայան

Ավագանու նիստին մասնակցում էին համայնքի գյուղական բնակավայրերի վարչական ղեկավարները և համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ Ա. Ղազարյանը

Նիստը վարում էր «Մեր համայնքը» խմբակցության ղեկավար՝ Ազատ Հովակիմյանը

Նիստն արձանագրում էր՝ համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գոհար Թադևոսյանը

ԼՍԵՑԻՆ

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 13-Ի
ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Ձեկ. ԱԶԱՏ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ)

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասին և 65-րդ հոդվածին համապատասխան, հիմք ընդունելով Ջերմուկ համայնքի ավագանու անդամների ընդհանուր թվի մեկ երրորդի կողմից 2025

թվականի հոկտեմբերի 9-ին ներկայացված ավագանու արտահերթ նիստ անցկացնելու նախաձեռնությունը՝

1. Հաստատել Ջերմուկ համայնքի ավագանու 2025 թվականի հոկտեմբերի 13-ի արտահերթ նիստի հետևյալ օրակարգը՝

1.1. Ջերմուկ համայնքի ղեկավարի արտահերթ ընտրություն անցկացնելու օր սահմանելու մասին

զեկ. համայնքի ավագանու «Մեր համայնքը» խմբակցության ղեկավար Ա. Հովակիմյան

1.2. Ջերմուկ համայնքի 2025 թվականի բյուջեի 3-րդ եռամսյակի կատարման վերաբերյալ համայնքի ավագանուն հաղորդում ներկայացնելու մասին

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ Ա. Ղազարյան

2. Սույն որոշումն ուժի մեջ է նտնում ստորագրման պահից:

Կողմ-----10----- Դեմ-----0----- Ձեռնպահ-----0-----

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 70-Ա/

ԼՍԵՑԻՆ

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՐՏԱՀԵՐԹ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՕՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱԶԱՏ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ)

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 142.3-րդ հոդվածի 1-ին մասով, Ջերմուկ համայնքի ավագանու կանոնակարգի 242-րդ կետով և հիմք ընդունելով Ջերմուկ համայնքի ղեկավար Վահագն Արսենյանի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման հանգամանքը՝ համայնքի ավագանու անդամի լիազորությունը կորցնելու պատճառով՝

1. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքի ղեկավարի արտահերթ ընտրություն անցկացնելու օր սահմանել 2025 թվականի հոկտեմբերի 22-ը: (Վայոց 12:00)

2. Սույն որոշումն ուժի մեջ է նտնում ստորագրման պահից:

Կողմ-----10----- Դեմ-----0----- Ձեռնպահ-----0-----

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 71-Ա/

ԼՍԵՑԻՆ

**ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ 3-ՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ
ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒՆ ՀԱՂՈՐԴՈՒՄ
ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

(Ձեկ. ԱՐՄԻՆԵ ՂԱԶԱՐՅԱՆ)

«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ և 6-րդ կետերի, 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետին և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 35-րդ հոդվածի համաձայն՝

1. Ի գիտություն ընդունել համայնքի ղեկավարի հաղորդումը Ջերմուկ համայնքի 2025 թվականի բյուջեի երրորդ եռամսյակի կատարման վերաբերյալ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-----⁹ Դեմ-----⁰ Ձեռնպահ-----¹
Ա. Ղազարյան

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 72-Ա/

Ավագանու անդամներ՝

ազգանուն, անուն, հայրանուն	ստորագրություն
Սարգսյան Վարդան Ռաֆիկի	
Սարգսյան Լուսիկ Ժորայի	
Վարդազարյան Աննա Վասակի	
Խաչատրյան Գոհար Բաբկենի	Բաբկենի
Համբարձումյան Մխիթար Սամվելի	
Այվազյան Մխիթար Վոլոդյայի	
Մկրտչյան Մարինե Մայիսի	
Բաբայան Ժիրայր Ժորայի	Բաբայան
Մնացականյան Արկադի Ալբերտի	
Գևորգյան Մանան Աղվանի	

Վահանյան Վարուժան Կնյազի	<i>[Signature]</i>
Հովակիմյան Ազատ Հայրիկի	<i>[Signature]</i>
Ավետիսյան Սյուզաննա Թաթուլի	<i>բացակա</i>

Ջերմուկ համայնքի ավագանու անդամ, «Մեր համայնքը»
խմբակցության նախագահ՝

ԱԶԱՏ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

[Signature]

Նիսյն արձանագրեց՝ Գոհար Թադևոսյանը

[Signature]

